

9434



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 09 » 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 206 - 24

Նախաձեռնող՝

«Վանաձոր ասար» առողջարան ՍՊԸ
Վանաձոր բնակավայր, 2. Անդրանիկի փողոց 2-2

Գործունեությունը՝

Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրերի
հանքավայրի Մեղրուտ փեղամասի թիվ 30/71 հորատանցքի
արդյունահանում (թույլտվության ժամկետի երկարաձգում)
Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 206 - 24

< 09 > հոկտեմբերի 2024թ.

Կիրովականի (Վանաձոր) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի «Մեղրուտ» տեղամասի թիվ Հ-30/71 հորատանցքի արդյունահանման աշխատանքների (թույլտվության ժամկետի երկարաձգում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Վանաձոր Ասար» Առողջարան ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթղթեր
Գործունեությունը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայր

Ներածական մաս. «Վանաձոր Ասար» Առողջարան ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից թիվ ՇԱԹՎ-29/443 արդյունահանման թույլտվության հիման վրա իրականացվել է Կիրովականի (Վանաձոր) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի «Մեղրուտ» տեղամասի թիվ Հ-30/71 հորատանցքից հանքային ջրի արդյունահանում: Ընկերությունը նախատեսում է շարունակել առողջարանային նպատակով Լոռու մարզի Կիրովական (Վանաձոր) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի «Մեղրուտ» տեղամասի թիվ Հ-30/71 հորատանցքից հանքային ջրի արդյունահանումը: Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 300.0 մ³/տարի կամ 0.01 լ/վրկ: Ընկերությունը հայցում է ստանալ հանքային ջրի արդյունահանման թույլտվություն՝ 20 տարի գործողության ժամկետով: Հանքային ջուրն օգտագործվելու է Վանաձոր քաղաքում գտնվող Ընկերությանը պատկանող առողջարանում:

Տեղամասը վարչատարածքային բաժանման տեսանկյունից գտնվում է Լոռու մարզի Վանաձոր խոշորացված համայնքի Վանաձոր քաղաքի սահմաններում, 06-001-422-031 և 06-001-422-031-001 կադաստրային ծածկագրերով՝ համապատասխանաբար բնակավայրերի և արտադրական նպատակային նշանակության հողամասերում: Գրանցված իրավունքի տեսակն է՝ վարձակալություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրի «Մեղրուտ» տեղամասը գտնվում է Վանաձոր բնակավայրի արևելյան սահմանում 1300-1400 մ բացարձակ բարձրությունների վրա: Երևան քաղաքի հետ կապված է երկաթուղով և բարեկարգ ասֆալտապատ ճանապարհով (հեռավորությունը՝ 150 կմ): Հորատանցքը



գտնվում է ճանապարհից 20 մ, հարակից տարածքով հոսող գետակից՝ 35 մ հեռավորության վրա:

Հ-30/71 հորատանցքը բնութագրվում է $X=4519420.0$ $Y=8457750.0$ կոորդինատներով և հյուսիսային լայնության $N40^{\circ}27.80''$ և արևելյան երկայնության $E44^{\circ}29'57.30''$ աշխարհագրական կոորդինատներով:

Հանքավայրի տեղամասի տարածաշրջանում զարգացած են անտառային գորշ, դարչնագույն հողերը և սևահողերը: Հանքավայրի և հարակից տարածքներում սողանքային, սելավային երևույթները բացակայում են: Կլիման բարեխառն է, զով, խոնավ ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով: Հիմնական ռիսկը պայմանավորված է երկրաշարժով:

Հ-30/71 հորատանցքի անմիջական ազդեցության գոտում բնապահպանական և պատմամշակութային հուշարձաններ, անտառային և բնապահպանական տարածքները բացակայում են, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր չեն արձանագրվել:

Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի «Մեղրուտ» տեղամասի պաշարները հաստատավել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից 03.12.1975թ-ին (արձանագրություն թիվ 7514) հետևյալ քանակություններով և կարգերով.

Հանքային ջրի տեսակը	Պաշարներ ի կարգը մ ³ /օր		Միներալի զացիան գ/լ	Լուծված ածխաթթու գազի պարունա-ը գ/լ	Սիլիկաթ թվի պարուն. մգ/լ	Ջերմ.	Հորա. համարը
	A	C ₁					
Քլոր-սուլֆատ- Հիդրոկարբոնա տային, կալցիում նատրիումային ածխաթթվային, սիլիկատային, սառը	254	589	2.3-3.4	1.4-2.0	50-114	12-17	30/71 18/71 33/71 6/72
	662	432	6.4-7.2	2.0-2.9	93-144	16-17	1/72 7/72

Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Մեղրուտ» տեղամասի երկրաբանական կառուցվածքի և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրությունների (մինչև 300 մ խորությամբ և մինչև 1-1.5 կմ լայնությամբ 23 հորատանցքերով) արդյունքում պարզվել է, որ տեղամասը գտնվում է Վանաձորի (Կիրովականի) միջլեռնային իջվածքի արևելյան մասում, որտեղ կուտակվել են միապլիոցենի և չորրորդական հասակի գետա-լճային փուխր բեկորային նստվածքներ և հրաբխային ապարներ: Նստվածքների հզորությունը տատանվում է 14-294 մ սահմաններում՝ օրինաչափ ավելանալով արևմուտքից-արևելք: Հանքային ջրերը ծածկված են 45-150 մ հզորության ջրամերժ ապարներով, որոնք ներկայացված են կավավազներով: Ապարները խիստ ջրահագեցված են, ճնշումային հորիզոնները՝ միմյանց հետ փոխկապակցված:

Շատրվանող 6 հորատանցքերի գումարային ծախսը կազմում է 24.2 /վրկ, ջրի դեբիտը տատանվում է 0.6լ/վրկ-ից մինչև 2.2լ/վրկ, իսկ ջրի ջերմաստիճանը տատանվում է 12^o-13.4^o սահմաններում:

«Մեղրուտ» տեղամասի հանքային ջրերը հանդիսանում են ածխաթթվային սառը ջրերի օրինակ, ունեն նույն քիմիական կազմը և հիմնականում սիլիկատային են (H₂SiO₂-



52-114.4 մգր/լ), ածխաթթվային (ընդհանուր գազի պարունակությունը մինչև 3.49 գր/լ), հիդրոկարբոնատ-սուլֆատ-քլորային, նատրիում-մագնեզիտ-կալցիումային կազմի, միջին միներալիզացիան՝ 1.8-7.0 գր/լ, հորատանցքից դուրս գալուց թույլ թթվային, մոտ չեզոք ռեակցիայով (PH 6.0-6.6):

Արտաքին տեսքով հանքային ջուրն իրենից ներկայացնում է թափանցիկ, անգույն հեղուկ, առանց այլ միացությունների, աննշան միներալային աղերի նստվածքով: Ունի ածխաթթվային հանքային ջրերին բնորոշ համ: «Մեդրուտ» տեղամասի հանքային ջուրը կայուն է ըստ ժամանակի և փոփոխությունների չի ենթարկվում:

«Մեդրուտ» տեղամասի հանքային ջրերը բնութագրվում են բարձր գազհագեցվածությամբ: Բոլոր ջրատար հորիզոնները համարվում են արդյունաբերական՝ ելնելով նրանց օգտագործման նպատակից:

Հաշվետվությամբ ներկայացվում է հանքային ջրերի քիմիական կազմի վերաբերյալ տարբեր խորություններից և տարբեր ժամանակներում կատարված հետազոտությունների արդյունքները: Համաձայն ուսումնասիրությունների՝ հանքավայրի ջրերն իրենց որակական հատկանիշներով բավարարում են ՀՀ տարածքում գործող նորմերի պահանջներին:

Ջրհավաք հորատանցքի շահագործումն Ընկերությունն իրականացնելու է փակ ռեժիմով: Թիվ Հ-30/71 հորատանցքը կահավորվել է համապատասխան կառույցով, իրականացվել է ջրհան կառույցների շուրջ ֆունդամենտի ջրամեկուսացում:

Հորատանցքն ունի հետևյալ կառուցվածքը՝


- Հորատանցքի խորությունը՝ 309.0 մ,
- Խողովակաշարի սկզբնական տրամագիծը՝ 168.0 մմ,
- Խողովակաշարի վերջնական տրամագիծը՝ 111.0 մմ,
- Ամրակապող խողովակաշարի երկարությունը՝ 127.0 մ, վերջնական տրամագիծը՝ 100.0 մմ:

Ջրհան կառույցներն ունեն փականային և ջրաչափական հանգույցներ, սանիտարական պահպանության գոտի, ջրատար խողովակաշար մինչև գործարան՝ համապատասխան դիտահորերով և ճնշման կարգավորիչ հորերով:

Ջրհավաք կառույցներն իրենց գլխամասային սարքավորումներով ներառված են առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում: Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն ջրհան կառույցները, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործական պաշարները:

Հ-30/71 հորատանցքն առողջարանից գտնվում է շուրջ 800 մ հեռավորության վրա: Հորատանցքի շուրջ տարածքը ցանկապատված է: Տարածքում առկա է շինություն, որտեղ տեղադրված են ջրահավաք բաք և դեպի առողջարան ջրմուղ պոմպ և հանգույց: Հանքային ջուրը փակ ցիկլով հորատանցքից դուրս եկող խողովակով անմիջապես լցվում է վերոնշյալ բաքը:

Հանքային ջուրը պոմպով $d=80$ մմ չժանգոտվող վերգետնյա խողովակներով մոտ 800մ հեռավորությամբ մղվում է առողջարան և հավաքվում այլումինե բաքի մեջ, այնուհետև բաքից $d=80$ մմ չժանգոտվող խողովակով տրվում է տաքացուցիչ: Առողջարանն ունի ջրաբուժական բաժանմունք՝ հանքային լոգանքների պրոցեդուրաներ իրականացնելու համար, ինչը հագեցած է համապատասխան սարքավորումներով և հանգույցներով: Որպես սանիտարական մաքրման միջոցներ օգտագործվում են ժամանակակից լավագույն լվացող միջոցները (Detox Spray, Domestos, Sidolux Profi): Օգտագործված ջուրն առողջարանից հեռացվում է քաղաքային կոյուղիով:



Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ շահագործման և առողջարանային պայմանների կազմակերպման համար Ընկերությունը համայրված է բազմափորձ մասնագետներով:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և այլ ենթակառուցվածքներից (գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր, կոյուղագծեր), նոր ենթակառուցվածքներ՝ այդ թվում ճանապարհներ, օժանդակ շինություններ չեն կառուցվելու:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքի պլանավորումը բացառում է հնարավոր մակերևութային աղտոտված ջրերի մուտքը ջրհավաք կառույցներ: Ջրհավաք կառույցների երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը գտնվում են բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի «Մեդրուտ» տեղամասի թիվ 30/71 հորատանցքի արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնաձին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվելու, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չեն կատարվելու: Հորատանցքի ջուրն ինքնահոս է, արդյունահանման համար ածխաջրածինների այրում չի իրականացվում, մթնոլորտ արտանետվող վնասակար գազերը բացակայում են: Հողատարածքների խախտում ևս չի ակնկալվում:

Նախատեսվող գործունեությունը չի ուղեկցվում ընդերքօգտագործման թափոններով: Պինդ կենցաղային թափոնները կուտակվելու են տարածքում առկա աղբամանների մեջ և պարբերաբար տեղափոխվելու են մոտակա աղբավայրեր:

Գործունեության աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունների աննշան քանակը չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Թիվ Հ-30/71 հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրահավաք հորատանցքի բերանի փականը կփակվի և կկապարանակնքվի, դրանով իսկ հանքավայրը կկոնսերվացվի՝ ապամոնտաժելով հորատանցքի կապտածները: Հանքային ջուրը հորատանցքից առողջարան տանող ջրատար խողովակաշարը ևս կենթարկվի ապամոնտաժման: Ջրհավաք հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին չի ապամոնտաժվի՝ հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը աղտոտումից և վնասակար ազդեցությունից պահպանելու համար:

Հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է ջրհան կառույցների լավ տեխնիկական վիճակի, գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտու առկայության և սահմանված կարգով այն պահելու պայմաններում:

Հանքավայրի թիվ Հ-30/71 հորատանցքի տարածքում, համաձայն ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի N 1484-Ն և 2018թ. փետրվարի 22-ի N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիթորինգ)՝ ջրի ծախսի (ջրի ծախսի չափումները կատարելու համար հորատանցքի մուտքի մոտ կառուցվելու է 20սմ բարձրության և 40սմ լայնության ջրաչափ (Թոմսոնի)), ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ: Շահագործմանը զուգընթաց իրականացվելու են հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար հանքային ջրերի



քանակի և որակի մշտադիտարկումներ՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից զերծ պահելու նպատակով:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետագա հինգ տարիների ընթացքում, տարեկան երկու անգամ իրականացնել հորատանցքի տարածքի մշտադիտարկում (տեղագնություն)՝ շրջակա միջավայրի և համայնքի բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով հետագա աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ. ՀՀ դրամ:

Խախտված հողատարածքների վերականգման ծախսերի հաշվարկների կատարման համար հիմք է հանդիսացել Կառավարության 2021թ. 1 օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» թիվ 1352-Ն որոշումը և ռեկուլտիվացման ծախսերը կազմել է 1038.1 հազ. ՀՀ դրամ: Գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա տնտեսական վնասը գնահատվել է 2721.6 հազ ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Լոռու մարզպետարանը, Վանաձորի համայնքապետարանը, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի Կիրովականի (Վանաձոր) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի «Մեղրուտ» տեղամասի թիվ Հ-30/71 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ Վանաձոր բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ (4 հանրային քննարկում):

Հանքավայրի հորատանցքի շահագործման ժամանակ լրացուցիչ տեխնաժին ճնշումներ շրջակայքի մթնոլորտի, մակերևութային ջրային ռեսուրսների, հողային ծածկույթի, կենսաբազմազանության, լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվի: Նախագծի իրականացումը չի ավելացնի լրացուցիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Նման միջոցառումը կպահպանի ստեղծված աշխատատեղերը՝ նպաստելով սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը: Ընկերությունը, սոցիալական ծրագրեր իրականացնելու նպատակով, ստանձնում է պարտավորություն մասնահանել տարեկան 700.0 հազ. ՀՀ դրամ՝ նպատակաուղղված ազդակիր համայնքի կարիքների բավարարմանը:

Փորձաքննական պահանջներ

- Օգտակար հանածոյի արդյունահանումն իրականացնելիս պետք է ապահովվի Կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի N 1484-Ն որոշման պահանջներով:



- Անհրաժեշտ է առաջնորդվել Ընդերքի մասին օրենսգրքի 67-րդ հոդվածի և ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի N 803 հրամանի պահանջներով՝ սանիտարական պահպանման առաջին գոտու սահմաններում հորատանցքն աղտոտումից զերծ պահելու նպատակով:
- Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով:
- Հանքային ջրի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել Հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական նորմերը:

ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վանաձոր Ասար» Առողջարան ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Կիրովականի (Վանաձոր) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի «Մեղրուտ» տեղամասի թիվ Հ-30/71 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

(Handwritten signature)

Աստղիկ Վարդանյան